КЛИМЕНТ АРУТЮНЯН, Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941–1945 гг.), *Е., издательство НАН РА "Гитутюн", 2004, 866 с., 534 фотографии.*

ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Հայ ժողովրդի մասնակցությունը Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.), *Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2004, 866 էջ, 534 լուսանկար:*

Գրախոսվող մենագրությունը հեղինակի ավելի քան 30 տարիների գիտահետազոտական բեղմնավոր աշխատանքի արդյունքն է: Այն ստեղծվել է հիմնականում Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի և Ռուսաստանի ռազմածովային նավատորմի կենտրոնական արխիվի նորահայտ վավերագրերի հիման վրա: Գրքում օգտագործվել են նաև ՀՀ ազգային արխիվի, Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Երևանի ռազմապատմական թանգարանների, Կրասնոգորսկի (Մոսկվայի մարզ) կինո-ֆոտո փաստաթղթերի կենտրոնական արխիվի, համապատասխան մասնագիտական գրականության և մամուլի նյութերը:

Հեղինակը հանգամանորեն լուսաբանել է Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցը, ըստ արժանվույն գնահատել ֆաշիզմի դեմ աշխարհի առաջադեմ մարդկության հաղթանակի գործում հայ ժողովրդի ծանրակշիռ ավանդը: Պատերազմի նախօրյակին ԽՍՀՄ-ում և աշխարհի մյուս երկրներում ապրող շուրջ 3 միլիոն հայերից Երկրորդ աշխարհամարտին մասնակցեցին ավելի քան 600000-ը, որոնց մեկ երրորդը զոհվեց մարտերում: Հեղինակը բարձր է գնահատել նրանց կատարած սխրանքները, վերհանել բազմաթիվ հայորդիների քաջագործությունները: *Մենագրության մեջ օգտագործած սկզբնաղբյուրների նկատմամբ հեղինակը քննական մոտեցում է ցուցաբերել, համեմատել և վերլուծել բազմաթիվ իրարամերժ փաստեր, կատարել անհրաժեշտ ճշտումներ, մոռացությունից փրկել ռազմի դաշտերում հերոսացած հարյուրավոր հայորդիների անուններ և լուսաբանել Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցը: Չնայած վերջինս մշտապես գտնվել է ինչպես Խորհրդային Հայաստանի, այնպես էլ Հայաստանի երրորդ Հանրապետության պատմագիտության ուշադրության կենտրոնում, ու տարիների ընթացքում զգալի գործ է կատարվել այդ կարևոր և արդիական թեմայի լուսաբանման ուղղությամբ, այնուամենայնիվ, գրախոսվող աշխատությունը գիտական լուրջ ներդրում է հայագիտության տվյալ բնագավառում և հայ պատմաբանների նախկինում կատարած շնորհակալ աշխատանքի շարունակությունն է՝ լրացնելով պատմագիտության ասպարեզում եղած «սպիտակ» էջերը:*

Մենագրությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, վերջաբանից, ընդարձակ հավելվածից և անգլերեն ամփոփումից:

Ներածության մեջ հեղինակն ընդհանուր գծերով բնութագրել է պատերազմի նախօրյակին Եվրոպայում և Ասիայում տիրող խիստ լարված միջազգային իրադրությունը, ներկայացրել, թե ինչ քայլերի էր դիմել խորհրդային կառավարությունն իր արևմտյան և հյուսիսային սահմանների անվտանգությունն ու երկրի պաշտպանունակությունն ամրապնդելու ուղղությամբ: Դրա հետ մեկտեղ, հեղինակն անդրադարձել է 1937-1940 թթ. Կարմիր բանակի հրամանատարական կազմի հանդեպ իրականացված ստալինյան բռնաճնշումներին, որին զոհ գնաց ավելի քան 40000 զինվորական: Հեղինակը հետաքրքիր փաստեր է բերել նաև ֆաշիստական Գերմանիայի կողմից ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու մասին խորհրդային հետախույզների տվյալների վերաբերյալ: Առաջին անգամ հայ պատմագիտության մեջ հեղինակն անդրադարձել է 1941 թ. հունիսի 18-ին հիտլերյան Գերմանիայի և Թուրքիայի միջև կնքված բարեկամության և չհարձակման մասին պայմանագրին, համաձայն որի գերմանական ռազմանավերն ազատ մուտք էին ստանում դեպի Սև ծով: Այդ պայմանագրի կնքումից մի քանի օր անց՝ հունիսի 22-ին, ֆաշիստական Գերմանիան հարձակվեց ԽՍՀՄ-ի վրա:

Առաջին գլուխը՝ «Պատերազմի առաջին շրջանը» վերնագրով, բաղկացած է չորս ենթաբաժիններից: Առաջին ենթաբաժնում լուսաբանվել են պատերազմի սկզբին ու առաջին մարտերին վերաբերող հարցեր, վեր հանվել այդ ծանր օրերին հայ ռազմիկների սխրանքները, բացահայտվել նոր անուններ, որոնք մինչև վերջերս անհայտ էին հայ պատմագիտությանը: Երկրորդ բաժնում լուսաբանվել են պատերազմի սկզբին Հայաստանում իրականացված ռազմամոբիլիզացիոն և ռազմապաշտպանական աշխատանքները, երրորդում՝ ազգային և այլ դիվիզիաների կազմակերպման հարցերը, չորրորդում՝ պատերազմի պահանջներին համապատասխան՝ Խորհրդային Հայաստանի ժողովրդական տնտեսության վերակառուցման խնդիրները: Գոյություն են ունեցել հայկական վեց դիվիզիաներ՝ 76-րդ, 89-րդ, 261-րդ, 408-րդ, 409-րդ և 390-րդ, որոնցից առաջին հինգը կազմավորվել են Խորհրդային Հայաստանի տարածքում, իսկ վերջինը՝ Կերչում: Դրանցից բացի, Հայաստանում ձևավորվել կամ համալրվել են ութ ոչ ազգային դիվիզիաներ. 31-րդ, 61-րդ, 136-րդ (հետագայում՝ 15-րդ գվարդիական), 138-րդ (հետագայում՝ 70-րդ գվարդիական), 151-րդ, 236-րդ, 320-րդ և 406-րդ: Պատերազմի առաջին շրջանում հանրապետությունում իրականացված հսկայական աշխատանքի շնորհիվ Խորհրդային Հայաստանի ժողովրդական տնտեսությունը վերակառուցվեց պատերազմական պահանջներին համապատասխան: Ռազմաճակատի կարիքների համար արտադրվում էին զենք ու զինամթերք, հանդերձանք, պարեն՝ առաջնորդվելով «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով:

Երկրորդ գլխում, որը կրում է «Պատերազմի առաջին և երկրորդ շրջանների գլխավոր ճակատամարտերում (1941-1944)» վերնագիրը, հեղինակը հիմնականում նորահայտ արխիվային փաստերի հիման վրա լուսաբանել է Մոսկվայի, Ստալինգրադի, Կովկասի, Կուրսկի, Լենինգրադի ճակատամարտերին, Կերչի, Ղրիմի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Մերձբալթիկայի, Կարելիայի և Անդրբևեռի ազատագրման գործողություններին հայ ռազմիկների մասնակցությունը:

Երրորդ՝ «Ֆաշիստական լծից Հարավարևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներն ազատագրողների շարքերում» գլխում հայ պատմագիտության մեջ առա-

ջին անգամ համակարգված լուսաբանվել է Լեհաստանի, Ռումինիայի, Հարավսլավիայի, Հունգարիայի, Ավստրիայի, Չեխոսլովակիայի և Գերմանիայի ազատագրման մարտերին հայ ժողովրդի զավակների մասնակցության հարցը:

Չորրորդ գլուխը՝ «Պարտիզանական շարժման և հակաֆաշիստական դիմադրության շարքերում սփյուռքահայերի ավանդը ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում», բաղկացած է երեք ենթաբաժիններից: Առաջին ենթաբաժնում ցույց է տրված, որ Հայրենական պատերազմում տարած հաղթանակում իրենց արժանի ավանդն են ներդրել հայ պարտիզանները. միայն Ուկրաինայում և Բելոռուսիայում մարտնչել են ավելի քան 2000, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում՝ 500, Մերձբալթիկայում, Լենինգրադի և Կալինինի մարզերում՝ 200, Ֆրանսիայում՝ 1200, Հունաստանում՝ ավելի քան 1000, Հոլանդիայում՝ շուրջ 800 հայ պարտիզաններ և այլն: Երկրորդ ենթաբաժնում հեղինակն անդրադառնում է ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում սփյուռքահայերի ավանդին: Սփյուռքահայերը ոչ միայն բարոյական, այլև նյութական զգալի օգնություն ցույց տվեցին մայր հայրենիքին ու Կարմիր բանակին: Նրանց հանգանակած գումարների շնորհիվ ստեղծվեց «Սասունցի Դավիթ» տանկային երկու շարասյուն (յուրաքանչյուրում քսան տանկ): Իրանի և Եթովպիայի հայերի հանգանակած գումարներով ստեղծվեց «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյունը: Հազարավոր սփյուռքահայեր, զենքը ձեռքներին, մարտնչել են ԽՍՀՄ դաշնակից երկրների շարքերում: Միայն ԱՄՆ բանակում մարտնչել են շուրջ 20000 հայորդիներ: Շուրջ 30000 հայ ռազմիկներ են մարտնչել Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի բանակներում: Ենթաբաժնում հետաքրքրքիր նոր փաստեր են բերվել աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնավուրի, նրա ծնողների ու քրոջ հակաֆաշիստական գործունեության վերաբերյալ: *Երրորդ ենթաբաժնում հեղինակն ընդհանուր գծերով տվել է պատերազմի տարիներին գերմանական բանակի կազմում գոյություն ունեցող Հայկական լեգեոնի պատմությունը: Նա հանգել է այն ճիշտ եզրակացության, որ Հայկական լեգեոնի գումարտակները (որոնց շարքերում եղել է 8–9 հազար ռազմագերի) հիմնականում դարձան խորհրդային պարտիզանների և ֆրանսիական, հոլանդական ու հունական Դիմադրության շարժման համալրման աղբյուր: Հայ լեգեոնականներով էր համալրված Ուկրաինայում գործող Ա. Ի. Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատը, Ֆրանսիայում մարտնչած խորհրդային առաջին պարտիզանական գունդը, Հունաստանում կռվող հայկական □Ազատություն□ պարտիզանական ջոկատը և այլն:*

Հինգերորդ գլխում լուսաբանվել է Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորների հերոսական աշխատանքը, որի շնորհիվ հանրապետությունը վերածվեց Կարմիր բանակի իսկական մարտական զինանոցի: Պատերազմի տարիներին Հայաստանում շահագործման հանձնվեցին 30 նոր արդյունաբերական ձեռնարկություններ, յուրացվեց 300 արտադրատեսակների արտադրություն, այդ թվում՝ ինքնաթիռաշինությունը: Սկզբնական շրջանում վերանորոգում էին մարտերում վնասված ինքնաթիռները, այնուհետև սկսեցին արտադրել «Յակ-3» կործանիչի թևեր ու շասսի, ապա՝ ուսումնավարժական «ՈւՏ-2Մ. ինքնաթիռներ: Գլխում բացահայտվել է նաև կոլտնտեսային գյուղացիության անձնուրաց աշխատանքը, ինչը հնարավորություն տվեց հանրապետությունն ապահովելու սեփական հացով: Գլխում հատուկ տեղ է հատկաց-

ված հաղթանակի գործում հայ մտավորականության արժանի ավանդին, նրա անձնվեր աշխատանքի լուսաբանմանը:

Վերջաբանում բերված ամփոփիչ թվական տվյալները ցույց են տալիս, որ պատերազմին ընդհանուր առմամբ մասնակցել է ավելի քան 600000 հայորդի, որոնց թվում՝ շուրջ 10000 հայուհի: Մասնակիցներից 300000-ը ռազմաճակատ են զորակոչվել Խորհրդային Հայաստանից, ավելի քան 200000-ը՝ ԽՍՀՄ այլ հանրապետություններից, մնացածը՝ արտասահմանյան երկրներից: Ֆաշիզմի դեմ մղված մարտերում զոհվել են ավելի քան 200000 հայեր: Միայն Արցախից ռազմաճակատ են մեկնել շուրջ 45000 հայեր, որոնցից 22000-ը զոհվել են մարտերում: Հետաքրքիր թվական տվյալներ են բերվել ռազմի դաշտում կատարած սխրանքների համար պարգևատրվածների մասին, որոնց համաձայն՝ հայերը կրկնակի անգամ գերազանցում են ադրբեջանցիներին, իսկ տված հերոսների թվով՝ ռուսներից, ուկրաինացիներից, բելոռուսներից ու թաթարներից հետո հրեաների հետ գրավում են պատվավոր հինգերորդ-վեցերորդ տեղերը՝ դարձյալ կրկնակի անգամ գերազանցելով ադրբեջանցիներին: Վերջաբանում հայ պատմագիտության մեջ առաջին անգամ թվական արժեքավոր նոր տվյալներ են բերվել 1945 թ. հունիսի 24-ին Մոսկվայի Կարմիր հրապարակում տեղի ունեցած Հաղթանակի զորահանդեսի հայ մասնակիցների վերաբերյալ: Պատմագիտական կարևոր արժեք է ներկայացնում մենագրության 748–854-րդ էջերում տպված ընդարձակ հավելվածը, որտեղ համառոտ, բայց սպառիչ տեղեկություններ են տրված Խորհրդային Միության հայ հերոսների, Փառքի շքանշանի լրիվ ասպետների, հայ մարշալների, գեներալների ու ծովակալների մասին: Գիրքը պատկերազարդ է, ունի 534 լուսանկար:

Աշխատությունն ունի նաև ճանաչողական, դաստիարակչական նշանակություն: Այն հատկապես նպաստելու է մատաղ սերնդի, հայ զինվորականության ռազմահայրենասիրական դաստիարակության գործին, ռուսախոս և անգլիախոս ընթերցողներին ծանոթացնելու է ֆաշիզմի դեմ աշխարհի առաջադեմ մարդկության տարած հաղթանակում հայ ժողովրդի ծանրակշիռ ավանդին: Չնայած աշխատության մեծ ծավալին՝ այն ընթերցվում է հետաքրքրությամբ, ձևավորված է պոլիգրաֆիական բարձր մակարդակով ու ճաշակով: Անշուշտ, դրա երևան գալը նկատելի առաջընթաց է Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցի գիտական լուսաբանման ասպարեզում: Մնում է ցանկանալ, որ այս մնայուն մենագրությունը լույս տեսնի նաև հայերեն:

ՔՅՈՒՐՔՉՅԱՆ Ա. Հ.
Պատմական գիտությունների դոկտոր